ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ա.Ձ. Մարգարիտ Արծրունյան-ն ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
5	Գրասենյակային աշխատանքային բազկաթոռ Նշանակությունը՝ նախատեսված գրասենյակային աշխատանքների համար հնգաթև անիվավոր հիմք, պտտվող բազկաթոռ՝ նստատեղի բարձրության կարգավորման, թիկնակի ճոճման և մեջքի հենման հնարավորությամբ: Թիկնակը՝ միջին բարձրության (Mid-Back), էրգոնոմիկ կառուցվածքով, օդաթափանց ցանցային գործվածքով (Mesh) պատված՝ մեջքի հենման և օդափոխության ապահովման համար: Գոտկատեղի հենարանը՝ ներկառուցված կամ բարձրությամբ կարգավորվող, մեջքի գոտկային հատվածի բնական կորությանը համապատասխանող կառուցվածքով՝ երկարատև նստած աշխատանքի ընթացքում հարմարավետ հենման համար: Նստատեղը՝ էրգոնոմիկ ձևավորմամբ, բարձր խտության առաձգական պոլիուրեթանային փրփուրից կամ համարժեք փափուկ լցանյութից, կտորե երեսպատմամբ: Լցանյութը՝ ձևը և առաձգական հատկությունները պահպանող, երեսպատումը՝ շփման, քերծվածքների և առօրյա մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմացկուն: Ճոճման և թեքության կարգավորման մեխանիզմը՝ ճոճման կամ թիկնակի թեքության կարգավորման և աշխատանքային դիրքում ֆիքսման հնարավորությամբ: Մեխանիզմը՝ Top-Gun, Synchro կամ համարժեք գործառութային հնարավորություններով: Բարձրության կարգավորման մեխանիզմը՝ գազային ամբարձիչով (Gas Lift), Class 3, Class 4 կամ համարժեք ամրության և գործառութային հատկանիշներով: Նստատեղի բարձրության սահուն կարգավորում՝ առնվազն 100 մմ միջակայքով: Բազկակալները՝ երկու հատ, ամուր պոլիմերային կամ մետաղական հիմքով, ֆիքսված կամ բարձրությամբ կարգավորվող կառուցվածքով, ձեռքերի հարմարավետ հենման համար: Անիվները՝ առնվազն 5 հատ, պտտվող, պոլիուրեթանային (PU) ծածկույթով

	կամ համարժեք պաշտպանիչ հատկություններով, հատակի մակերեսը քերծվածքներից և վնասվածքներից պաշտպանող, սահուն և նվազագույն աղմուկով տեղաշարժ ապահովող: Պտտման հնարավորությունը՝ նստատեղի պտտում ուղղահայաց առանցքի շուրջ՝ 360°: Թույլատրելի բեռնվածությունը՝ առնվազն 120 կգ: Չափերը՝ • Բազկաթոռի ընդհանուր բարձրությունը՝ 860-940 մմ: • Նստատեղի բարձրությունը հատակից՝ 420-500մմ: • Նստատեղի լայնությունը՝ 485 մմ: • Նստատեղի խորությունը՝ 410 մմ: • Թիկնակի բարձրությունը՝ 500-550 մմ: • Բազկաթոռի ընդհանուր լայնությունը՝ 570 մմ: Կառուցվածքի ամրությունը և կայունությունը՝ ամուր և հուսալի միացումներով, առանց ճոճման մեխանիզմից չբխող անկայունության, կողմնակի աղմուկների և շահագործմանը խոչընդոտող դեֆորմացիաների: Արտաքին տեսքը՝ հարթ և պատշաճ մշակված մակերեսներով, առանց ճաքերի, պատռվածքների, քերծվածքների, երեսպատման վնասվածքների և այլ տեսանելի թերությունների: Գույնը՝ սև: Ընդհանուր պահանջները՝ նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, հավաքման և շահագործման համար անհրաժեշտ բոլոր կցամասերով, ամրակներով և պարագաներով: Մատակարարման պայմանները՝ ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը, հավաքումը (եթե ապրանքը ունի հավաքման կարիք) և տեղադրումը համապատասխան սենյակում կամ պահեստում, ինչպես նաև կարգաբերումները իրականացվում է Վաճառողի ուժերով և իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետը՝ առնվազն 365օր:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ա.Ձ. Մարգարիտ Արծրունյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
5	